

Արձանագրություն թիվ 2

15 սեպտեմբերի 2014թ.

ք.Էջևան

Նախագահ՝ Ա.Շ.Մարգարյան

Քարտուղար՝ Ա.Ռ.Մելքունյան

Ներկա էին խորհրդի բոլոր 8 անդամներ:

Օրակարգ

1. 2014-2015 ուս.տարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ ստուգումների և քննությունների ժամանակացույցի քննարկում և հաստատում:

/զեկ. Ա.Շ.Մարգարյան/

2. Կրեդիտային համակարգի կիրառության վերանայում կրթական ծրագրերում և ուսուցման ձևերում:

/զեկ. Ա.Շ.Մարգարյան/

3. Ֆակուլտետում մասնագիտական խմբերի ստեղծում:

/զեկ. Ա.Շ.Մարգարյան /

ԼՄԵՑԻՆ- Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը: Նա ներկայացրեց 2014-15թթ ուստարվա I ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների գրաֆիկը, որը համապատասխանում է յուրաքանչյուր մասնագիտության ուսումնական պլանին: Այն քննարկվել է ամբիոնների նիստերում, յուրաքանչյուր կուրսում և արժանացել է հավանության, ժամկետը որոշվել է ըստ հաստատված ուսումնական գործընթացի ժամանակացույցի:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- „Գծանկարի գունանկարի և քանդակի” ամբիոն վարիչ Ա.Հ.Միրզոյանը: Նա հավանություն տվեց ներկյացված ժամանակացույցին և առաջարկեց հաստատել 2014-15թթ. ուստարվա I ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների գրաֆիկը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հանձնարարել բոլոր դասախոսներին, ընթացիկ քննությունները և ստուգումները անցկացնել ըստ հաստատված ժամանակացույցի և կատարման վերահսկողությունը դնել ուսումնական խորհրդատուի Դ.Զիբուխյանի վրա :

Օրակարգի երկրորդ հարցի մասին խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը ներկայացրեց, որ կրեդիտային համակարգի պահանջները կիրառվում է կրթական ծրագրերում և ուսուցման ձևերում: Այդ ուղղությամբ նա հանձնարարեց դեկանատին և ամբիոններին, աշխատել կրեդիտային համակարգով ուսումնական կրթական ծրագրերի և պլանների ինչպես նաև առարկայական ծրագրերի նորացման վրա: Միաժամանակ առաջարկեց, մասնագիտական խմբերին տանել աշխատանքները նոր կրթագիրք կազմելու:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հանձնարարել ամբիոնների վարիչներին և առաջատար մասնագետներին կազմել մեթոդական խմբեր՝ „Դիզայն,“ և „Կիրառական արվեստի,“ մասնագիտությունների կրթագիրք կազմելու համար:

Օրակարգի երրորդ հարցի մասին զեկուցումով հանդես եկավ ֆակուլտետի խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը: Նա ներկայացրեց, որ պետք է կազմվեն կրթական ծրագրեր ֆակուլտետի մասնագիտությունների համար: Կրթական ծրագրերը պետք է արտացոլեն նախնական գիտելիքները, դասավանդվող առարկաները, ուսումնառության ձևերը և կրթական արդյունքները: Զեկուցողն առաջարկեց ստեղծել մասնագիտական խումբ, որոնք մեկամսյա ժամկետում պետք է վերանայեն կրթական ծրագրերը և ներկայացնեն ֆակուլտետի խորհրդի հաստատմանը: Առաջարկեց „Կիրառական արվեստ,“ և „Դիզայն,“ մասնագիտությունների համար հետևյալ մասնագիտական խումբը.

1. Մարգարյան Ա.Շ. –դեկան
2. Ա.Հ.Միրզոյան- Գծանկարի գունանկարի և քանդակի” ամբիոն վարիչ
3. Զիբուխյան Ա.Լ.- մասնագիտության պատասխանատու
4. Զիբուխյան Դ.Լ.-ուսումնական խորհրդատու
5. Հովհաննիսյան Ս.Թ.-ասիստենտ
6. Զավրուշյան Գ. Մ.-ասիստենտ

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Խորհրդի անդամների կողմից եղավ ընդհանուր քննարկում ներկայացված ցուցակի վերաբերյալ: Առաջարկեցին հաստատել:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել վերոհիշյալ կազմը և հանձնարարել երկամսյա ժամկետում ֆակուլտետի խորհրդի քննարկմանը ներկայացնել կրթական նոր ծրագրերը:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ա.Շ.Մարգարյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա.Ռ.Մելքումյան